Արձանագրություն N 8

Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 5-ի

Օրակարգ

1. **<<Ընդդեմ գենդերային բռնության 2014 թվականի միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին>>, <<Գենդերային քաղաքականության 2014 թվականի միջոցառումների տարեկան ծրագրին հավանություն տալու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշումների նախագծերի և <<Սոցիալական աջակցության մասին>> ՀՀ օրենքի նախագծի ներկայացում**

/ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ, կանանց հիմնահարցերի բաժնի պետ ***Ա. Թանաշյան***/

2. **Նորածինների սեռերի անհամամասնությունը Հայաստանում և դրա հետևանքները**

/ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի ներկայացուցչի օգնական ***Գ.Հայրապետյան***/

3. **<<Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ>> ամենամյա հանրապետական քարոզարշավի մասին**

/Հանձնաժողովի անդամներ/

4. **Ելույթներ, մտքերի փոխանակում**

Մասնակցեցին

Ֆ. Բերիկյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ ***(հանձնաժողովի նախագահ)***
Լ. Ղազարյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետ
Ն.Արզունյան	ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի համակարգի իրավական ապահովման

	վարչության ԴԱՀԿ և քրեակատարողական համակարգի օրենսդրական ապահովման բաժնի պետ
Կ. Սուջյան	ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի մարդու իրավունքների և հումանիտար հարցերի բաժնի պետ
Ն. Դուրյան	ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ 3-րդ վարչության պետ
Գ.Հայրապետյան	ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի գործադիր ներկայացուցիչ
Ծ.Հարությունյան	ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի ծրագրերի պատասխանատու
Հ.Արենս	ՄԱԿ-Ի Մանկական հիմնադրամի ղեկավար
Ա. Այվազով	ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի ՄԱՄՀ ծրագրավորման բաժնի ղեկավար
Տ. Աղաբեկյան	<<Կանանց ռեսուրսային կենտրոն>> հասարակական կազմակերպության անդամ (համաձայնությամբ)
Դ. Սարգսյան	<<Կանանց իրավունքների կենտրոն>> հասարակական կազմակերպության ներկայացուցիչ
Ս.Վարդանյան	<<Կանանց իրավունքների կենտրոն>> հասարակական կազմակերպության նախագահ
Ջ.Ուիփ	ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատարի գրասենյակի համայնքային ծառայությունների բաժնի աշխատակից
Մ.Ներսիսյան	ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատարի գրասենյակի ինտերն
Թ. Աբրահամյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի կանանց հիմնահարցերի բաժնի կրտսեր մասնագետ
Ա. Թանաշյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ, կանանց հիմնահարցերի բաժնի պետ ***(հանձնաժողովի քարտուղար)***

Հանձնաժողովի նիստը բացեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ Ֆ. Բերիկյանը և ներկայացրեց օրակարգը: Մինչև օրակարգի հարցերին անդրադառնալը պարոն Բերիկյանը հանձնաժովի անդամներին ներկայացրեց վերջին շրջանում որոշ հասարակական կազմակերպությունների և հասարակական շարժումների ղեկավարների, ինչպես նաև որոշ քաղաքական ու հասարակական գործիչների կողմից <<գենդեր>> և <<գենդերային հավասարություն>> հասկացությունների

սխալ մեկնաբանման արդյունքում հասարակության մեջ ստեղծված լարվածության կապակցությամբ ՀՀ կառավարության դիրքորոշումը խնդրի կարգավորման ուղղությամբ: Նա տեղեկացրեց, որ ՀՀ վարչապետին կից կանանց խորհրդի նոյեմբերի 22-ի նիստում արվել է հայտարարություն, որը տեղադրված է ՀՀ կառավարության պաշտոնական էլեկտրոնային կայք էջում:

Օրակարգի առաջին հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ, կանանց հիմնահարցերի բաժնի պետ Ա.Թանաշյանը: Նա ներկայացրեց <<Ընդդեմ գենդերային բռնության 2014 թվականի միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին>>, <<Գենդերային քաղաքականության 2014 թվականի միջոցառումների տարեկան ծրագրին հավանություն տալու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշումների նախագծերը և դրանցում ներառված միջոցառումները, նշելով առավել նշանակալի ծրագրերը: Նա նշեց նաև, որ հանձնաժողովի անդամները կարող են ներկայացնել իրենց առաջարկները նախագծի կապակցությամբ, որից հետո այն սահմանված կարգով կներկայացի ՀՀ կառավարություն: Ա.Թանաշյանը ներկայացրեց նաև <<Սոցիալական աջակցության մասին>> ՀՀ օրենքի նախագիծը, մասնավորապես, ընտանեկան բռնության խնդրին առնչվող դրույթներին, որոնք ներառվել են նախագծում: Նա նշեց նաև 2014թ. տարեկան ծրագրով իրականացվող այն միջոցառումները, որոնք հետագայում կնպաստեն օրենքի կիրարկմանը:

Օրակարգի երկրորդ հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի գործադիր ներկայացուցիչ Գ.Հայրապետյանը: Նա ներկայացրեց ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի կողմից՝ ՀՀ առողջապահության նախարարության, վերարտադրողական առողջության պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտի և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության համագործակցությամբ իրականացված հետազոտությունը, դրա արդյունքները: Նա ներկայացրեց նաև այն գործընթացները, որոնք իրականացվել են վերջին շրջանում հանրապետությունում նորածինների սեռերի անհամամասնության կանխարգելմանն ուղղված խնդիրներին: Մասնավորապես, Գ.Հայրապետյանն անդրադարձավ ս/թ. նոյեմբերի 11-13-ը Հնդկաստանում՝ Նոր Դելի քաղաքում ՄԱԲՀ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակի նախաձեռնությամբ անցկացված <<Գենդերային խտրականությամբ սեռի ընտրության հակազդում>> թեմայով միջտարածաշրջանային կարողությունների զարգացման աշխատանքային հանդիպան ընթացքում քննարկված խնդիրներին և այլ երկրներում խնդրի կարգավորման ուղղությամբ ձեռնարկած քայլերին, ինչպես նաև ս/թ. նոյմբերի

29-30-ը Աղվերանում կայացած Հայաստանում նորածինների սեռերի անհամամասնության վերաբերյալ փորձագիտական քննակման ընթացքում մշակված առաջարկներին: Նա տեղեկացրեց, որ վերոհիշյալ առաջարկները լրամշակվելուց հետո կներկայացվեն շահագրգիռ մարմիններ:

Օրակարգի երրորդ հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի գրասենյակի ծրագրերի պատասխանատու Ծ.Հարությունյանը: Նա տեղեկացրեց, որ նոյեմբերի 25-ին ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակում տեղի է ունեցել մամլո ասուլիս՝ նվիրված Հայաստանում <<Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ>> ամենամյա քարոզարշավի մեկնարկին: Նա ծանոթացրեց 16-օրյա քարոզարշավի օրացույցին, որն այս տարի ներառում է տարատեսակ միջոցառումներ, այդ թվում՝ երթ ընդդեմ կանանց նկատմամբ բռնության, 16-օրյակի հարցերի բարձրացում ԱԺ-ում, թեմատիկ հանդիպում-քննարկումներ, Հայաստանում սեռական բռնության խնդրին նվիրված վավերագրական ֆիլմի դիտում, լուսանկարչական ցուցահանդես, ինտերակտիվ ֆորում թատրոնի ներկայացում և այլն:

Իրենց կազմակերպությունների կողմից նախատեսված ծրագրերը համառոտ ներկայացրեցին նաև <<Կանանց ռեսուրսային կենտրոն>> հասարակական կազմակերպության անդամ Տ. Աղաբեկյանը և <<Կանանց իրավունքների կենտրոն>> հասարակական կազմակերպության նախագահ Ս.Վարդանյանը: Իրականացվելիք ծրագրերի մասին ամփոփ պատկերացում կազմելու նպատակով Ա.Թանաշյանն առաջարկեց, որ համապատասխան կառույցները հանձնաժողովին ներկայացնեն տեղեկատվություն <<Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ>> ամենամյա հանրապետական քարոզարշավի ընթացքում իրենց կազմակերպությունների կողմից իրականացված միջոցառումների վերաբերյալ:

Օրակարգի չորրորդ հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի մարդու իրավունքների և հումանիտար հարցերի բաժնի պետ Կ. Սուջյանը: Նա անդրադարձավ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի <<Կանայք, խաղաղությունն ու անվտանգությունը>> 1325 բանաձևից բխող պարտավորությունների կատարման հարցին և առաջարկեց ձեռնարկել քայլեր համապատասխան լուծումներ գտնելու համար:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Ի գիտություն ընդունել Ա.Թանաշյանի և Գ.Հայրապետյանի հաղորդումները:

2. Հանձնարարել՝ հանձնաժողովի անդամներին մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել առաջարկություններ <<Ընդդեմ գենդերային բռնության 2014 թվականի միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին>>, <<Գենդերային քաղաքականության 2014 թվականի միջոցառումների տարեկան ծրագրին

հավանություն տալու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշումների նախագծերի վերաբերյալ:

3. Հանձնարարել՝ Գ.Հայրապետյանին հանձնաժողովի քննարկմանը ներկայացնել փորձագիտական խմբի կողմից մշակված հանրապետությունում նորածինների սեռերի անհամամասնության կանխարգելմանն ուղղված առաջարկությունները:

4. Հանձնարարել՝ Կ.Սուջյանին հանձնաժողովի քննարկմանը ներկայացնել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի <<Կանայք, խաղաղությունն ու անվտանգությունը>> 1325 բանաձևից բխող պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը:

5. Հանձնարարել՝ հանձնաժողովի անդամներին ներկայացնել տեղեկատվություն <<Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ>> ամենամյա հանրապետական քարոզարշավի ընթացքում իրականացված միջոցառումների վերաբերյալ:

Հանձնաժողովի նախագահ՝ **Ֆ. Բերիկյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ **Ա.Թանաշյան**
/12.12.2013թ./